ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ №-06

«23 » « 06 » 2015թ.

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով.

Արարատի մարզի
Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Բերքանուշ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի նախագիծը,ըստ որի առաջարկվում է.

ա) համայնքի սեփականություն հանդիսացող 21,87հա գյուղատեսչական նշանակության հողամասի՝ այդ թվում 15,67 հա վարելահող, 2,55 հա պտղատու այգի, 0,77հա խաղողի այգի և 2,9հա գյուղատնտեսական այլ հողամաս,նպատակային նշանակությունը փոփոխել և դասել բնակավայրերի հողերի կատեգորիայի:

բ) Համայնքի սեփականություն հանդիսացող 2,9հա գյուղատնտեսական նշանակության հողամասի՝ այդ թվում 1,3հա պտղատու այգի և 1,6հա վարելահող,նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի կատեգորիայի, գյուղատնտեսական արտադրության օբյեկտների կառուցման նպատակով:

գ) համայնքային սեփականություն հանդիսացող 1,02հա գյուղ նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել և դարձնել հատուկ պահպանվող հողամասերի կատեգորիայի:

Հողամասերի օտարումը կատարել ըստ առաջնահերթության, հիմք ընդունելով գլխավոր հատակագծի պահանջները:

Որոշումը ընդունվեց միաձայն՝

1. Վ.Ադամյան կողմ
2. Ն. Գրիգորյան կողմ
3. Գ.Դավթյան կողմ
4. Ա. Թադևոսյան կողմ
5. Ս.Հովնանյան կողմ
6. Ա.Վրթանեսյան կողմ

Գլխավոր քարտուղար՝ Մ. Հայրապետյան